Հայտարարվում է մրցույթ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ–ի նախակրթարանի դաստիարակի թափուր տեղի:

Կից ներկայացնում ենք դաստիարակի թափուր տեղի համար տրված հայտարարությունը:

Մրցույթի մասնակիցների գիտելիքներն և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1).
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
3) անձը հաստատող փաստաթուղթ.
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
5) ինքնակենսագրություն (Ձև 4).
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք :

Փաստաթղթերն ընդունվում են հունվարի 5-ից մինչև փետրվարի 2-ը ներառյալ, ամեն օր ժամը 10.00-ից մինչև 15.00-ը, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից :

Մրցույթը տեղի կունենա 2026թ. -ի փետրվարի 5-ին, ժամը՝ 14:00, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 հիմնական դպրոցում. հասցեն՝ քաղաք Էջմիածին Արագած զանգված 18:

Տեղեկությունների համար զանգահարել (77) 85-31-10 հեռախոսահամարով :